


ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ Քաղաքացիների Պաշտոնական Էլեկտրոնային փոստի
գրասեղան

Տարբերակ 1.6



Բովանդակություն

Բարի գալուստ	3
1. Մուտք համակարգ – նույնականացման քարտով	3
2. Մուտք Բջջային նույնականացման քարտով	7
2.1 Տրամադրվող ծառայություններ.....	7
2.2 Վերահասցեագրում էլ.փոստին.....	10
2.3 Վերահասցեագրում էլ.փոստին՝ իրավաբանական անձանց համար	11
2.4 Վերահասցեագրում «SMS» հաղորդագրություններով.....	12
3. Բջջային ID	14
4. Խնդիրներ	17

Բարի գալուստ

ՀՀ քաղաքացիների էլեկտրոնային գրասեղան համակարգը նպատակ ունի մեկտեղել ՀՀ կառավարության կողմից էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունները և ՀՀ քաղաքացիներին տրամադրել պետության հետ էլեկտրոնային եղանակով պաշտոնական շփման միջավայր:

1. Մուտք համակարգ – նույնականացման քարտով

Պաշտոնական էլեկտրոնային փոստի համակարգից կարող են օգտվել ՀՀ ԿԱ Ոստիկանության կողմից տրամադրված և նույնականացման քարտ ունեցող ՀՀ քաղաքացիները:

Նույնականացման քարտով համակարգ մուտք գործելու նկարագրությունը ներկայացված է ստորև:

Ուշադրություն: Խնդրում ենք ուշադրություն դարձնել **PIN** և **PUK** կոդերին: Դրանք տրամադրվում են փակ ծրարով անձնագրային բաժանմունքում՝ նույնականացման քարտի հետ միասին: Քարտի առաջին իսկ օգտագործման ժամանակ անհրաժեշտ է ակտիվացնել PIN կոդը:

PIN կոդի ակտիվացման մանրամասներին կարող եք ծանոթանալ [Էլ. Ստորագրության Ուղեցույցում](#)

https://www.ekeng.am/file_manager/ID_Signature_Userguide-Version_2.2.pdf

1. Տեղադրեք նույնականացման քարտը կարդացող սարքի մեջ և սպասեք մինչև հավաստագիրն ընթերցվի:


Քարտի հաջող ընթերցման դեպքում Ձեր համակարգչի ծանուցումներ բաժնում կցուցադրվի հետևյալ հաղորդագրությունը:

Խնդրում ենք սպասել մինչև հաղորդագրությունը ցուցադրվի, այն կարող է տևել մինչև 2 րոպե:





2. Համակարգի հասցեն է www.e-citizen.am, որտեղ կարելի է մուտք գործել՝ **Mozilla Firefox, Google Chrome** և **Internet Explorer** ծրագրերով:

Համակարգի լեզուն կարող էք փոխել կայքէջի վերևի ընտրանուց:



3. Այնուհետև սեղմեք <<Մուտք>> հղումը և համակարգը Ձեզ կտանի մուտքի պատուհան:





Մուտք նույնականացման քարտով բաժնից սեղմեք «**ՄՈՒՏՔ**» կոճակը և համակարգը կհարցնի Ձեր նույնականացման քարտի «**PIN**» գաղտնաբառը:

Մուտքագրեք «**PIN**» գաղտնաբառը և սեղմեք «**OK**» կոճակը: Եթե մուտքը հաջողվել է, ապա վերևի ընտրանում կտեսնեք նոր առաջացած «**ԳՐԱՍԵՂԱՆ**» հղումը:

2. Մուտք Բջջային նույնականացման քարտով

Տվյալ հավելվածը այս պահին չի գործում, սակայն մոտ ապագայում հնարավոր կլինի մուտք գործել համակարգ Բջջային նույնականացման քարտով և կատարել համապատասխան կարգավորումները:




2.1 Տրամադրվող ծառայություններ


Համակարգը տրամադրում է հետևյալ ծառայությունները՝

1. **Էլ. Փոստ** - ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, պաշտոնական էլեկտրոնային փոստն ակտիվացված է համարվում տվյալ ֆիզիկական անձի համար նույնականացման քարտի տրամադրման պահից : Պաշտոնական էլ-փոստ,

որը համարվում է քաղաքացիների և պետության միջև հաղորդակցության պաշտոնական միջոց և իրենից ներկայացնում է ՀՕՀ@e-citizen.am համադրություն, որտեղ ՀՕՀ-ն հանրային ծառայությունների համարանիշն է, որը տպված է նույնականացման քարտի դարձերեսին:

2. **Ծանուցումներ** - գրանցվելով համակարգում քաղաքացիները հնարավորություն կստանան պետական տարբեր մարմինների կողմից իրենց առաքվող ծանուցումները ստանալ նաև էլեկտրոնային եղանակով:
3. **Վերահասցեագրում** - բոլոր գրանցված օգտվողները կարող են իրենց ծանուցումները նաև վերահասցեագրել անձնական էլ-փոստին կամ դրանք ստանալ հաղորդագրության տեսքով իրենց բջջային հեռախոսին:
4. **Տվյալների պաշտպանություն** - գրանցվելով կայքում քաղաքացիները հնարավորություն կունենան մշտապես հետևել իրենց մասին պետական տվյալների շտեմարաններում պահվող անձնական տվյալների և պետական մարմինների կողմից դրանց օգտագործման մասին:
5. **Հրապարակային ծանուցումներ** - այս բաժնում ցուցադրվելու են տարբեր պետական մարմինների կողմից հրապարակված ծանուցումները:





Ձեր պահվող տվյալները - տվյալ բաժնում ներկայացված է Ձեր վերաբերյալ ՀՀ տարբեր էլեկտրոնային շտեմարաններում պահվող տվյալների մասին տեղեկատվությունը:

ՎՎ ռեգիստր – նշված բաժնում ներկայացված են ՀՀ ԿԱ ճանապարհային ոստիկանության վարորդական վկայականների ռեգիստրում Ձեր մասին պահվող տվյալների վերաբերյալ տեղեկությունները:


ԱՏՄ ռեգիստր - տվյալ բաժնում ներկայացված են ՀՀ ԿԱ ճանապարհային ոստիկանության ավտոտրանսպորտային միջոցների ռեգիստրում Ձեր մասին պահվող տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

ԻԱ ռեգիստր - այս բաժնում ներկայացված են ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում Ձեր մասին պահվող տվյալների վերաբերյալ տեղեկությունները:

2.2 Վերահասցեագրում էլ.փոստին

Համակարգը հնարավորություն է տալիս Ձեր պաշտոնական էլ-փոստը վերահասցեագրել 3 տարբեր էլեկտրոնային հասցեների:

Էլ-փոստն ակտիվացնելու համար անհրաժեշտ է այն վերահասցեագրել Ձեր անձնական էլ-փոստին: Վերահասցեագրման էլ-փոստերի տողերից մեկում լրացրեք Ձեր անձնական էլ-փոստի հասցեն և սեղմեք «Պահպանել» կոճակը:



The screenshot shows a web browser window with the URL <https://eid.e-citizen.am/dashboard/mail/forwarding>. The page title is "E-Citizen" and the language is set to "am". The main content area is titled "Էլ. փոստ" (Email) and "Վերահասցեագրում" (Forwarding). It contains three rows for adding email addresses:

Էլ. փոստ
Էլ. փոստ 1 cssupport@ekeng.am
Էլ. փոստ 2 <input type="text"/>
Էլ. փոստ 3 <input type="text"/>

At the bottom of the form, there are two buttons: "Պահպանել" (Save) and "Դադարեցնել" (Cancel).

Պահպանել կոճակը սեղմելիս համակարգը վավերացման հղումով էլ-փոստ է ուղարկում վերահասցեագրման հասցեներից յուրաքանչյուրին:

Վավերացման հղումով նամակը կստանաք noreply@e-citizen.am հասցեից, իսկ նամակի վերնագիրը կլինի «E-Citizen email verification»: **Մտանայուց հետո անհրաժեշտ է սեղմել նամակով ստացված հղումը:**

Ուշադրություն: Խնդրում ենք ստուգել վերահասցեագրման նամակը նաև Ձեր էլ. փոստի **Spam** ֆոլդերում:

Հղումը Ձեզ կտանի համակարգի էլ-փոստ բաժինը և կցուցադրի վերահասցեագրման հաստատման տեքստը:

Վավերացման գործընթացի հաջող ավարտը կարող էք նաև ստուգել կրկին այցելելով «Վերահասցեագրում» բաժին:

2.3 Վերահասցեագրում էլ.փոստին՝ իրավաբանական անձանց համար

Այն ֆիզիկական անձիք, ովքեր հանդիսանում են ընկերության հիմնադիր, տնօրեն, աշխատակազմի ղեկավար և այլն, մուտք գործելով ՊԷՓ համակարգ, կարող են տեսնել նաև [Անձնական/ Իրավաբանական անձի](#) հատված և ստանալ տվյալ ընկերությանն ուղարկված ծանուցումները:

Իրավաբանական անձի ծանուցումները հնարավոր է վերահասցեավորել 3 էլ.փոստերի:

Էլ. փոստ
Անձնական Իրավաբանական
Ձեր էլ-փոստը վերահասցեագրված է հետևյալ հասցեներին :


Էլ.փոստը մուտքագրելուց հետո սեղմել **Պահպանել**, որից հետո մուտքագրված էլ.փոստին ուղարկվում է հաստատող էլ.փոստ:

Ստացված էլ.փոստում անհրաժեշտ է սեղմել ստացված հղման վրա և հաստատել:

Վերահասցեագրումը ավարտելուց հետո համակարգը կհաստատի Ձեր գործողությունների վավերացումը:


2.4 Վերահասցեագրում «SMS» հաղորդագրություններով

Ծառայությունների ցանկից սեղմեք **«Վերահասցեագրում»** հղումը և ընտրեք **Բջջային համարներ** ենթաբաժինը:




Բջջային հեռախոսի համարներ տողում լրացրեք բջջային հեռախոսահամար և սեղմեք **«Պահպանել»** կոճակը:


Համակարգը հնարավորություն է տալիս Ձեր «SMS» հաղորդագրությունները վերահասցեագրել մուտքագրված հեռախոսահամարին:





Պահպանել կոճակը սեղմելիս համակարգը նշված հեռախոսահամարին ուղարկում է հաղորդագրություն 6 նիշից բաղկացած (հաղորդագրությունն ունի հետևյալ բովանդակությունը՝ **To verify this number E-Citizen portal please provide this token: 10128d.https://www.e-citizen.am**) :



Հաղորդագրությունը ստանալուց հետո անհրաժեշտ է սեղմել վավերացնել կոճակը և մուտքագրել հեռախոսահամարին ստացած 6 նիշից բաղկացած հաղորդագրությունը:




Բարեհաջող վերահասցեագրման վերաբերյալ հաստատման տեքստը հետևյալն է.

վերահասցեագրման վավեր հեռախոսահամարը ցուցադրվում է՝ «» նշանով, իսկ վավերացում չանցած հեռախոսահամարները՝ «» նշանով:

3. Բջջային ID


Բջջային նույնականացման համարը՝ բջջային ID հնարավորություն է տալիս «e-citizen» հավելված մուտք գործել բջջային հավելվածի միջոցով:

Սեղմելով «**Քեներացնել**» կոճակը, հայտնվում է կոդ, որն անհրաժեշտ է մուտքագրել բջջային հավելվածում:



Բջջային նույնականացման համարը նախատեսված է «e-citizen» բջջային հավելված:

Բջջային հեռախոսի Play Store փաթեթից անհրաժեշտ է տեղադրել «e-citizen» հավելվածը:



Գեներացված կողմն անհրաժեշտ է մուտքագրել բացված պատուհանում և սեղմել «մուտք» կոճակը.




Ծանուցումներ և **Էլ. Փոստ** բաժինները համարվում են պաշտոնական հաղորդակցության միջոց, պետության և քաղաքացիների միջև, էլեկտրոնային եղանակով:

4. Խնդիրներ

Ինչու՞ չեն կարողանում մուտք գործել համակարգ նույնականացման քարտով և ստանում են **error** հաղորդագրություն:

Նույնականացման քարտով **e-Citizen.am** կայք մուտք գործելիս առաջացած խնդիրների դեպքում խնդրում ենք www.ekeng.am կայքից տեղադրել հանրային հավաստագրերը՝ https://www.ekeng.am/file_manager/EKENG-certificate-installation1.zip: Ներբեռնելով համակարգիչ՝ սեղմել «EKENG certificate installation.exe» ֆայլը, ընտրել համապատասխան լեզուն և տեղակայել:

Այլ հարցերի կամ խնդիրների դեպքում կարող եք դիմել մեզ՝

 +374 60 464 504

 cssupport@ekeng.am